Հավելված 1
«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-11/1-15/1» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ
# ԴԻՄՈՒՄ

------------------------------------------------------------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

«ՀԱՅԱՍՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ-ի կողմից № «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-11/1-15/1» ծածկագրով հայտարարված ընթացակարգի------------------------------------------------------------չափաբաժնին (չափաբաժիններին)
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

և իրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
-----------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ`
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

--------------------------------------------------------------------------------------
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

----------------------------------------------------------------------------------- -------------------------------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

________________________2015 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-11/1-15/1» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված № **«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-11/1-15/1»** ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, -----------------------------------------------------------------ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների՝

**(ՀՀ դրամ)**

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| **1** | Բենզին Ռեգուլյար | | | |
| **2** | Բենզին Պրեմիում | | | |
| **3** | Դիզելային Վառելիք | | | |

****3-րդ** *սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է* **4-րդ** *սյունակում:*

______________________________________________ ____________

Մասնակցի անվանումը (անունը (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը ) ( ստորագրությունը)

Կ. Տ.

________________________2015 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3

Նախագիծ

**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**№ «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-11/1-15/1»**

ք. Երևան «_____»____________ 2015թ.

«ՀԱՅԱՏՈՄ» ԳՀԻ ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Վ. Գ. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «________________________________»-ն, ի դեմս տնօրեն ____________________________յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

**1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 5) Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 4 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **վառելիք** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա համար։

1.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 4, 5 և 6 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան, գնման և վճարման ժամանակացույցերով սահմանված ժամկետներով։

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը։

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 5 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում։

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեներով։

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 **Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը։

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _________________ (_______________________________________________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.1.2 Պայմանագրով նախատեսված Ապրանքի դիմաց վճարումները կիրականացվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի մասին կողմերի միջև կկնքվի *լրացուցիչ համաձայնագիր* (կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել մինչև 20 տոկոս կանխավճար):

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

**5. Ապրանքի որակը**

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 3) և Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Եթե Ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ինչպես նաև ներկայացվում է սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված

փաստաթղթերը: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Ապրանքի ընդհանուր քանակի բաժանումը ըստ եռամսյակների կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով:

Սույն պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

**** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

*1) մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ իրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները).*

*2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով իրավերով սահմանված որակավորման պահանջներին.*

*3) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ: Պատվիրատուն իր համաձայնությունը տալու համար իրավունք ունի մասնակցից պահանջելու նոր գործակալի կամ ենթակապալառուի վերաբերյալ փաստաթղթեր՝ վերջինիս համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը ճշտելու նպատակով: Պատվիրատուի անհամաձայնության դեպքում վերջինս երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է մասնակցին և գործակալի կամ ենթակապալառուի փոփոխություն չի կատարվում, կամ պայմանագիրը լուծվում է.*

*4) մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների համար:*

9,5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության

գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը և հավելվածները կազմված են 11 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 4, N5, N 6 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.11. Սույն պայմանագրով նախատոսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է ——————------------------------------—————:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **«ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ**<br>0027, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50<br>Հ/Հ 2470100074890000<br>«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում<br>ՀՎՀՀ 01804548<br>Հեռ/ Ֆաքս: 010 732130, 010 734610 | |
| **Գլխ. Տնօրեն Վ. Պետրոսյան**<br>----------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | **Տնօրեն**<br>---------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 4
‘_____’ __________ 2015թ. կնքված
№ «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-11/1-15/1» գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| №№ | Չափաբաժնի անվանումը | Չափաբաժնի նկարագիրը | Տեխնիկական բնութագիրը | Չափի միավորը |
|---|---|---|---|---|
| 1 | բենզին | ռեգուլյար | Արտաքին տեսքը` մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով` ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով` ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը` 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ$^3$-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը` 15 $^0$C ջերմաստիճանում` 720-ից մինչև 775 կգ/մ$^3$, ծծմբի պարունակությունը` 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը` 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի` մեթանոլ-3 %, էթանոլ-5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ (C5 և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 %, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը` ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»:<br>Մատակարարումը կտրոններով, լիցքավորումը Երևանի վարչական շրջանների առնվազն 6 լցակայաններում: | լիտր |
| 2 | Բենզին | պրեմիում | Արտաքին տեսքը` մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով` ոչ պակաս 95, շարժիչային մեթոդով` ոչ պակաս 85, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը` 45-100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ$^3$-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1% -ից ոչ ավելի, խտությունը` 15 $^0$C ջերմաստիճանում` 720-775 կգ/մ$^3$, ծծմբի պարունակությունը 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը 2,7%-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի` մեթանոլ-3%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ-7%, եթերներ (C5 և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, | լիտր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»: | |
| | | | Մատակարարումը կտրոններով, լիցքավորումը Երևանի վարչական շրջանների առնվազն 6 լցակայաններում: | |
| 3 | Դիզելային վառելիք | Դիզելային վառելիք ամառային | Ցետանային թիվը 51-ից ոչ պակաս, ցետանային ցուցիչը-46-ից ոչ պակաս, խտությունը $15^0$ C ջերմաստիճանում 820-ից մինչև 845 կգ/մ$^3$, ծծմբի պարունակությունը 350 մգ/կգ-ից ոչ ավելի, բռնկման ջերմաստիճանը $55^0$ C-ից ոչ ցածր,ածխածնի մնացորդը 10% նստվածքում 0,3%-ից ոչ ավելի, մածուցիկությունը $40^0$ C-ում՝ 2,0-ից մինչև 4,5 մմ$^2$ /վ, պղտորման ջերմաստիճանը՝ $0^0$ C-ից ոչ բարձր, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»: | լիտր |
| | | | Մատակարարումը կտրոններով, լիցքավորումը Երևանի վարչական շրջանների առնվազն 6 լցակայաններում: | |

ԳՆՈՐԴ

«ՀԱՅԱՍՏՈՒՄ» ՓԲԸ

**Գլխ. Տնօրեն** **Վ. Պետրոսյան**

----------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

**Տնօրեն**

---------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 5
«____» __________ 2015թ. կնքված
№ «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-11/1-15/1» գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման ենթակա ապրանքներ | | | Նախատեսվում է գնել 2015թ. | | | | | | | | | | | | ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | 1-ին եռամսյակ | | | 2-րդ եռամսյակ | | | 3-րդ եռամսյակ | | | 4-րդ եռամսյակ | | | | |
| | | | Հունվար | Փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Քանակ /լիտր/ | Գինը /դրամ/ |
| 1 | 2 | 3 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 1 | Բենզին պրեմիում | լիտր | - | 300 | 300 | 300 | 300 | 300 | 300 | 300 | 300 | 400 | 400 | 400 | 3600 | |
| 2 | Բենզին ռեգուլյար | լիտր | - | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 200 | 200 | 200 | 1500 | |
| 3 | Դիզելային վառելիք ամառային | լիտր | - | - | 50 | 50 | 50 | 50 | 50 | 50 | 50 | 50 | 50 | 50 | 500 | |

*Հետագայում կնքվելիք պայմանագրերի գնման ժամանակացույցում ապրանքները պետք է մատակարարվեն եռամսյակներով, համապատասխանաբար 1-ին եռամսյակի համար նախատեսված ամբողջ ծավալը՝ մինչև 2015թ-ի փետրվարի 20-ը, 2-րդ եռամսյակի համար նախատեսված ամբողջ ծավալը՝ մինչև 2015թ-ի ապրիլի 14-ը, 3-րդ եռամսյակի համար նախատեսված ամբողջ ծավալը՝ մինչև 2015թ-ի հուլիսի 21-ը, 4-րդ եռամսյակի համար նախատեսված ամբողջ ծավալը՝ մինչև 2015թ-ի հոկտեմբերի 20-ը։

ԳՆՈՐԴ

«ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ

**Գլխ. Տնօրեն** **Վ. Պետրոսյան**
----------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

**Տնօրեն**
--------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 5
‘ ’ ______ __________ 2015թ. կնքված
№ «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-11/1-15/1» գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ Ä²Ø²Ü²Î²òàôÚò

| ¶ÝÙ³Ý »ÝÃ³Ï³ ³åñ³ÝùÝ»ñÇ ²Ýí³ÝáõÙÁ | | Ø»Ï ÉÇïñÇ ·ÇÝÁ /¹ñ³Ù/ | Ü³Ë³ï»ëíáõÙ ¿ ýÇÝ³Ýë³íáñ»É 2015Ã. | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ÇÝ »é³ÙëÛ³Ï | 2-ñ¹ »é³ÙëÛ³Ï | 3-ñ¹ »é³ÙëÛ³Ï | 4-ñ¹ »é³ÙëÛ³Ï | ÀÝ¹³Ù»ÝÁ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | ´»Ý½ÇÝ åñ»ÙÇáõÙ | | 20% | 45% | 70% | 100% | 100% |
| 2 | ´»Ý½ÇÝ é»·áõÉÛ³ñ | | 20% | 45% | 70% | 100% | 100% |
| 3 | ¸Ç½»É³ÛÇÝ í³é»ÉÇù ամառային | | 20% | 45% | 70% | 100% | 100% |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

«ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ

**Գլխ. Տնօրեն** **Վ. Պետրոսյան**

----------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

**Տնօրեն**

---------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 6
'_____' __________ 2015թ. կնքված
№ «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-11/1-15/1» գնման պայմանագրի

Գնորդ

______________________________
______________________________
______________________________
հասցե___________________________
հհ______________________________
______________________________
հվհհ____________________________

Վաճառող

______________________________
______________________________
______________________________
հասցե___________________________
հհ______________________________
______________________________
հվհհ____________________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«------» ---------------------» 2015-թ.

Պայմանագրի անվանումը՝ ------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «------» --------------------- 2015թ

(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)

Պայմանագրի համարը՝ --------------------------

Գնորդն, ի դեմս -------------------------------------------------------------------- և Վաճառողը, ի դեմս --------------------------------------------------------, հիմք ընդունելով որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորեվ նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ ապրանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Վաճառողը «------» -------------------- 2015թ.-ից «------» -------------------- 2015թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ մատակարարումները

| **Գնման առարկայի անվանումը** | **Մատակարարման քանակական ցուցանիշները** | **Մատակարա-րումների ժամկետը** | **Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)** | **Վճարման ժամկետը (ըստժամանակացույցի)** |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________________
ստորագրություն

ազգանուն, անուն ____________________

Ապրանքն ընդունեց

______________________________
ստորագրություն

ազգանուն, անուն ____________________